



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 30

2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի
պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Քաղսի համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 7-րդ
արտահերթ նիստի օրակարգը՝

1. Քաղսի համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ սահմանելու մասին:
4. Քաղսի համայնքում աղբահանության իրականացման և սանիտարական մաքրման կարգը և սխեման հաստատելու մասին:
5. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:
6. Քաղսի համայնքում արտաքին գովազդի տեղադրման կարգը և պայմանները սահմանելու մասին:

7. Քաղսի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի N40-Ն որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին:
8. Քաղսի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
9. Քաղսի համայնքի ավագանուն 2021 թվականի հուլիսի 19-ի N28-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
10. Քաղսի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 18-ի N03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
11. Քաղսի համայնքի ավագանու 2010 թվականի օգոստոսի 20-ի N49 որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին :

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 31

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ
ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել, որ Քաղսի համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարվում են փաստաթղթային:

2. Հաստատել՝

ա) տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:

բ) տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն սույն որոշման թիվ 2 հավելվածի:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Հ/Հ	Վաճառք			Տրված վճարի տեսակը	Պայմանագրի / Պրոջեկտ		Վճարման	
	մուտքի վճարումներ / արձեղանքներ / արձեղանքներ	մուտքի վճարումներ / արձեղանքներ	Գործունեության արժեքի հաշվարկ		Պայմանագրի / Պրոջեկտ	Պայմանագրի / Պրոջեկտ	Վճարման	Վճարման

Տրված վճարի տեսակը
ՎՃԱՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ



Հայաստանի Հանրապետության
Քաղաք համայնքի ավագանու
օգուտարի 19



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի 41.1-րդ կետով,

Համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Սահմանել տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման
թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները.
ա/ Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 4-րդ, 6-րդ
փողոցներում և 2-րդ թաղամասում:
2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություններ իրականացնելը
պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների /օգտագործողների/
համապատասխան որակավորում և /կամ/ տեխնիկական սարքավորումների որոշակի
պայմանների ապահովում:

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱԿԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
40-րդ կետով,

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Քաղսի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման եվ
իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակամյան օրվան հաջորդող օրը:

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅԻՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒ

ՈԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Քաղսի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

Հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

Խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,

Ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առնջարկում է սպառողին՝ գանգվածի և գնի նշումով,

Հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:

5. Հանրային սննդի կազմակերպման ու իրականացման համար թույլտվությունը (հետագայում թույլտվություն) տրվում է Քաղսի համայնքի ղեկավարի (հետագայում համայնքի ղեկավար) կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

նախատեսված կազմակերպական-իրավական բոլոր տեսակի ձեռնարկություններին և անհատ ձեռներեցներին (հետագայում տնտեսվարող սուբյեկտներ)՝ անկախ սեփականության ձևից:

6. Հանրային սննդի կազմակերպման ու իրականացման թույլտվությունների համար սահմանվում է գործողության ժամկետ մեկ տարի:

7. Տրված թույլտվությունների համար գանձվում է տեղական տուրք «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը հանրային սննդի օբյեկտի կողմից առաջարկվում է սպառողին՝ մասնաբաժնի և գնի նշումով:

9. Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:

10. Սպասարկող անձնակազմի անդամները պետք է ունենան սանիտարական հագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և գրադեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված ձեռնարկության կնիքով:

11. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

12. Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

3. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

13. Հանրային սննդի կազմակերպման ու իրականացման թույլտվություն ստանալու նպատակով տնտեսվարող սուբյեկտները տեղական ինքնակառավարման մարմին են ներկայացնում.

ա) հայտ՝ համաձայն N 2 ձևի,

բ) հանրային սննդի կազմակերպման վայրի՝ շինության, տաղավարի, կրպակի և այլն, հաստատող փաստաթղթերը,

գ) հիմնադիր փաստաթղթերի պատճենները (եթե տնտեսվարող սուբյեկտը չունի պետական գրանցում, ապա այդ մասին համապատասխան գրառում է կատարվում «հատուկ պահանջներ» մասում),

դ) տեղեկանք տարածքի և սպասարկող անձնակազմի սանիտարահիգիենիկ նորմաներն ապահովելու մասին:

14. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

15. Թույլտվություն տալու հետ միաժամանակ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան հայտատուից գանձվում է տեղական տուրք:

16. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը (N 1ձև), որը տրվում է ընթացիկ տարվա համար՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):

17. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուին ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է հայտը մուտք լինելու օրվանից 2 օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

18. Սույն կանոններով սահմանված ժամկետում հայտը չմերժվելու դեպքում այն համարվում է բավարարված:

19. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

20. Հանրային սննդի կազմակերպման և իրականացման նպատակով թույլտվություն ստանալու համար տնտեսվարող սուբյեկտները սույն կարգով նախատեսված փաստաթղթերը ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմին:

21. Փաստաթղթերի ընդունումը կատարվում է հաշվառման մատյանում համապատասխան գրանցում կատարելու միջոցով:

22. Տնտեսվարող սուբյեկտի կողմից հայտի ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է ընդունված փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրություն և դրական եզրակացության դեպքում համայնքի ղեկավարի հաստատման է ներկայացվում թույլտվության վերաբերյալ որոշման նախագիծ:

23. Որոշման ստորագրման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում լրացվում է համապատասխան թույլտվություն և տրվում տնտեսվարող սուբյեկտին:

24. Անհատ ձեռներեցներին և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին տրվող թույլտվության մեջ նշվում են թույլտվության գրանցման համարը, պետական ռեգիստրում վկայականի սերիան և համարը, անունը, ազգանունը, հայրանունը, տնտեսական գործունեություն իրականացնելու հասցեն և տեսակը, թույլտվության տրման ամսաթիվը և տնտեսական գործունեություն իրականացնելու ժամկետը:

25. Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկություններին տրվող թույլտվության մեջ նշվում են կազմակերպա-իրավական տեսակը, ֆիրմայի անվանումը, լիցենզիայի գրանցման համարը, պետական ռեգիստրում գրանցման վկայականի սերիան և համարը, տնտեսական գործունեություն իրականացնելու հասցեն և տեսակը, լիցենզիայի տրման ամսաթիվը և տնտեսական գործունեություն իրականացնելու ժամկետը:

26. Թույլտվության գործունեության ժամկետի երկարացումը իրականացվում է թույլտվության ստանալու համար սահմանված կարգին համապատասխան:

27. Տնտեսվարող սուբյեկտի տնտեսական գործունեությունն իրականացնելու հասցեն փոփոխվելու դեպքում թույլտվությունը ենթակա է վերափոխման ՀՀ օրենսդրության և սույն կարգի համաձայն:

28. Թույլտվության բնօրինակը կորցնելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը հայտարարություն է տալիս զանգվածային լրատվության միջոցներում և դիմում է տեղական ինքնակառավարման մարմին կրկնօրինակ ստանալու համար:

3. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

29. Գործունեության իրականացման հայտը կարող է մերժվել հետևյալ պատճառներով
ա) թույլտվություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերում իրականությունը չհամապատասխանող տեղեկությունների հայտնաբերման դեպքում,

բ) եթե հայտատուի ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը և սույն կարգի պահանջներին:

գ) եթե խախտվել են սույն կարգով սահմանված սննդի կազմակերպման պայմանները:

4. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

30. Համայնքի ղեկավարի որոշմամբ թույլտվության գործողությունը կարող է ժամանակավորապես դադարեցվել:

31. Թույլտվության գործողության դադարեցման կամ ժամանակավորապես դադարեցման հիմք կարող են հանդիսանալ ՀՀ օրենսդրությամբ վերահսկողություն իրականացնող գործադիր մարմինների կողմից ներկայացված հիմնավորումների հիման վրա:

32. Արգելվում է թույլտվությամբ նախատեսված գործունեության կասեցումը մինչև դադարեցման կամ ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունումը:

33. Թույլտվության դադարեցման մասին որոշման ընդունումից հետո 3 շխառանքային օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը զրավոր իրազեկվում է որոշման մասին, որին կցվում է բաղվածք որոշումից, իսկ ժամանակավորապես դադարեցման դեպքում նաև թերությունների վերացման միջոցառումների ցանկը:

34. Թույլտվությունը չեղյալ համարելու համար հիմքեր ի հայտ գալու դեպքում թույլտվություն տված համապատասխան մարմինը սահմանում է ժամկետ տնտեսվարող սուբյեկտի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու համար:

35. Սահմանված ժամկետում թույլ տրված խախտումները չվերացնելու դեպքում թույլտվությունը կարող է չեղյալ համարվել այն տրված մարմնի կողմից հետևյալ հիմքերով՝

ա) եթե թույլտվություն ստանալու համար ներկայացված հայտի և հիմնավորումների մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,

բ) եթե տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրի կամ մարդկանց առողջությանը,

գ) եթե տնտեսվարող սուբյեկտը չի կատարում թույլտվության մեջ նշված հատուկ պահանջները:

36. Թույլտվության գործողության դադարեցման մասին որոշումը տնտեսվարող սուբյեկտը կարող է բողոքարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

37. Տնտեսվարող սուբյեկտի գործունեության դադարեցման դեպքում թույլտվությունը համարվում է ուժը կորցրած:

5. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

38. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

39. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

40. Տնտեսվարող սուբյեկտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնտեսական գործունեությունն իրականացնելու ողջ ժամանակահատվածում պատասխանատվություն են կրում հանրային սննդի կազմակերպման կանոնների կատարման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռաֆայել Գրիգորյան



(Թույլտվություն տրամադրող համայնքի անվանումը)

ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

N _____

Տրված _____ 20__թ.

Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպա-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը

Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը

Թույլտվության գործողության ժամկետը _____ 20__թ.
մինչև _____ 20__թ. :

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՅՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը

2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցներ

4. Գործունեության անվանումը

5. Թույլտվության ժամկետը

(նշել թույլտվության պահանջվելիք ժամկետը)

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ:

(կազմակերպության պատասխանատու անձի անունը, հայրանունը, ազգանունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

20__թ.

Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 34

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ
ՄԱՔՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով, 13-րդ հոդվածով, «Թափոնների մասին» 22 օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Քաղսի համայնքում աղբահանության իրականացման և սանիտարական մաքրման կարգը և սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





Հայկական

Քաղաքի հիվանդանոցի մարմնում

2021 թվականի օգոստոսի 13-ի N 34 որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ընդհանուր դրույթներ.

Սույն կարգը կարգավորում է Քաղսի համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը՝ չվճարելու, պարտավորությունները չկատարելու համար:

Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Թափոնների մասին>> և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքից բխող սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Աղբահանություն՝ համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքում, փոխադրում աղբավայր.

Աղբ՝ կենցաղային աղբ, ոչ կենցաղային աղբ (արտադրական, շինարարական), խոշոր եզրաչափերի աղբ.

Սանիտարական մաքրում՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, փակուղիների, նրբանցքների, մայթերի, անցումների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրում՝ աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, մաքրում ձյունից և սառույցից:

օպերատոր՝ համայնքին աղբահանության և (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն (կազմակերպություններ) կամ անհատ ձեռնարկատեր (անհատ ձեռնարկատերեր):

Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակները և գործընթացի կազմակերպման սկզբունքները

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.

4) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացումը սույն օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան.

5) աղբահանության վճարովի լինելը.

6) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը.

7) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից.

8) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը.

9) ոլորտում միջհամայնքային համագործակցությունը.

10) համայնքային բյուջեի հաշվին սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:

Աղբահանության վճարը.

1. Աղբահանության վճարը վճար վճարողների կողմից աղբահանության դիմաց <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով և սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Աղբահանության վճար վճարողների շրջանակը.

1. Աղբահանության վճար վճարողներ են համարվում համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը: Եթե միևնույն գույքի նկատմամբ սույն օրենքի իմաստով աղբահանություն վճար վճարող են համարվում մեկից ավելի անձինք, ապա աղբահանության վճարի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

2. Համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:

Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը.

1. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) հաշվից:

Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպմանը ներկայացվող պահանջները.

2. Աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներն են՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

Աղբի հավաքմանը և պահմանը ներկայացվող պահանջները

1. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

2. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում առաջացող աղբի համար համայնքը կամ օպերատորը տեղադրում է աղբամաններ սանիտարահիգիենիկ կանոններին և նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան:

3. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած կամ համայնքի կամ օպերատորի կամ սույն կարգով նախատեսված անձանց տրամադրած և դրանց համար նախատեսված աղբամաններում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում, եթե այլ բան չի սահմանել համայնքի ավագանին: Ընդ որում, համայնքը կամ օպերատորը աղբամանները աղբահանության համար վճարողների պահանջով կարող է տրամադրել վարձակալության հիմունքներով:

4. Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները:

5. Արգելվում է աղբը պահել և թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում:

Աղբի փոխադրմանը ներկայացվող պահանջները.

3. Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Աղբի տեղադրմանը ներկայացվող պահանջները

1. Աղբը տեղադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում կամ ենթարկվում է վերամշակման:

2. Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:

3. Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

Սանիտարական մաքրման սխեմային ներկայացվող պահանջները

1. Սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետևյալ հիմնական տարրերը. համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասագերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմների և ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

2. Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

Աղբահանության վճար կատարելու հիմքը, դրա դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը.

1. Աղբահանության վճարի հաշվարկման կարգը, վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանում է համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով:

Աղբահանության վճարի վճարման կարգը.

1. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի կանխիկ՝ հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
2. Աղբահանության վճարի դրույքաչափի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում աղբահանության վճար հաշվարկողը հաջորդող ամսվա 10-ը ներառյալ աղբահանության վճար վճարողներին իրազեկում է հաշվարկված վճարի չափի մասին:

Աղբահանության վճար վճարողներին հաշվառողները, աղբահանության վճարը հաշվարկողները և աղբահանության վճարի գանձումը.

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը իրականացնում է համայնքապետարանի աշխատակիցների կողմից:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին:
3. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքները և պարտականությունները. Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքներն են՝

1. Ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից կատարվող վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը կատարված հաշվարկների հետ:
2. Ծանոթանալ իրենց կողմից կատարվող վճարի չափին և հաշվարկներին, ինչպես նաև տեղեկություններ ստանալ իրենց կատարած վճարումների մասին:
3. Օրենքով սահմանված կարգով բողոքարկել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման իրեն վերաբերող գործողությունները:
4. Համայնքի ղեկավարից պահանջել աղբահանությունը կազմակերպողի պարտավորությունների պատշաճ կատարում:

Աղբահանության վճար վճարողները պարտավոր են՝

1. սույն օրենքով սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:
2. աղբը պահել և թափել դրա համար սահմանված կամ նախատեսված վայրերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԽԵՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների մաքրում աղբից , տերևակույտերից , կենդանիների դիակներից Սանիտարական մաքրման աշխատանքները , կապված տարվա եղանակների հետ , իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են:

Ամառային մաքրում: Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մերենայացված մաքրման տեխնոլոգիաները: Հավաքարարների միջոցով իրականացված մաքրման աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովել ընդհանուր օգտագործման տարածքներից աղբից , տերևակույտերից , կենդանիների դիակներից մաքրումը բարելավելու միկրոկլիման և նվազեցնելու օդի աղտոտվածության աստիճանը: Հավաքարարները աղբը հավաքում են հատուկ տարաներում կամ պարկերում : Մերենայացված մաքրման խնդիրը ապահովել փողոցներից աղբի հեռացումը, հեղեղատարների մաքրումը :

Զմեռային մաքրում: Այն իր մեջ ընդգրկում է փողոցների, նրբանցքների , փակուղիների, թաղամասերի, մայթերի մաքրումը ձյունից , մայթերի սառցակալման դեմ աշխատանքները, սառցակույտերի մաքրում և հեռացում:

ա) համայնքում առաջացող ամսական աղբի ծավալների մոտավոր հաշվարկով կազմում է շաբաթական 21 խմ

բ) համայնքում աղբահանությունը և սանիտարական մաքրում իրականացվում է համայնքի բոլոր փողոցներում փակուղիներում , նրբանցքներում հասարակական այլ տարածքներում :

գ) աղբահանությունը իրականացվում է շաբաթական 1 օր շրջիկ ինքնաթափ մերենայի միջոցով տեղափոխվում է 5-7 կմ հեռավորության վրա գտնվող Հրազդան համայնքի տիպային աղբավայր:

դ) Գոյացած կենցաղային աղբը բնակչության կողմից հավաքվում է պոլիէթիլենային պարկերում կամ համապատասխան տարրաներում:

ե) Աղբատար մեքենան կենցաղային աղբը տեղափոխման համար պետք է ունենա թափքը ծածկող համապատասխան ծածկոց:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 35

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍԻ
(ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ)
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի
1-ին մասի 35-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական
հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և
(կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և
շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և
պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող օրը:

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





Քաղսի համայնքի ավագանու
2021 թվականի օգոստոսի 13-ի
N 35 որոշման

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետև՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

2. Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվությունը տալիս է Քաղսի համայնքի ղեկավարը ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջներին և պայմաններին:

3. Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

**2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

- 1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից,

անհատական բնակելի տներից նվազագույնը 50մ հեռավորության վրա բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

ա. գերեզմանատներին կից՝ գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև 50մ հեռավորության վրա, կամ

բ. միայն անհատական բնակելի տներից և(կամ) հանրային սննդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

5. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝

1) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. նախասրահ՝ հանդերձարանով,

բ. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,

գ. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք),

դ. սանհանգուց (առնվազն 2 հատ, որից մեկը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար),

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ,

զ. հուղարկավորությունը ստանձնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք,

2) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկական օգնության սենյակ մուտք գործելու համար,

3) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգուցյաներ,

4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները, այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեփսակները պետք է տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ, ընդ որում ցուցանակները պետք է լինեն լուսավորված,

6) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունենա յուրաքանչյուր հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,

7) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 50քմ մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,

8) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,

9) քաղաքացիական հոգեհանգստի սրահը շահագործողը պետք է ունենա բժշկի որակավորում ունեցող աշխատակից կամ համապատասխան պայմանագիր գործող բժշկական հաստատությունների հետ՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ողջ ժամանակահատվածում բժշկի ներկայությունը ապահովելու համար՝ անհրաժեշտության դեպքում առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով,

10) քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարակաբանական) նորմերի ու կանոնների պահպանումը:

6. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև հոգևորականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագանների վաճառքի սրահ, որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մզավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 36

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով,
<<Գովազդի մասին >> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը.
Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Քաղսի համայնքում արտաքին գովազդի տեղադրման կարգը և
պայմանները՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - 5

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԵՆՈՔՅԱՆ ՄԵԴԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՊԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ





Քաղսի համայնքի ամսական
2021 թվականի օգոստոսի 15-ի N 36 հրավեր

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը (այսուհետ՝ կարգ): Սույն կարգն ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
2. Արտաքին գովազդն (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկատվությունների տարածումն է բնակավայրերում՝ տարբեր տեխնիկական միջոցների օգնությամբ (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլնի) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքի կամ նախաձեռնությունների նկատմամբ:
Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը գովազդ չի համարվում:
3. Սույն կարգը տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի գովազդը:
4. Քաղսի համայնքի սեփականություն համարվող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով, կարգին և պայմաններին համապատասխան, Քաղսի համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին) օգտագործման իրավունքով տրամադրվում է հողամաս՝ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետնախապատվության իրավունքով երկարաձգելու պայմանով:
5. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), սպա գովազդի միջոցի տեղադրելու թույլտվության մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայության դեպքում: Ընդ որում, գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով:
6. Գովազդի միջոց տեղադրելու թույլտվության մասին որոշման նախագծին կցվում է գովազդատուի ու տարածքի սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի պատճենը:
7. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1422-Ն որոշման պահանջներին:

8. Քաղսի համայնքի տարածքում գովազդ տեղադրելու թույլտվությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի համաձայն տրվում է Քաղսի համայնքի ղեկավարի որոշմամբ: Համայնքի ղեկավարի որոշմանը կցվում են թույլտվությունը և գովազդի էսքիզը:

9. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) դիմում-հայտ է ներկայացնում Քաղսի համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, ազգանունը, հաշվառման վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և զբառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը:

10. Քաղսի համայնքի ղեկավարը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) դիմում-հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջներին (եթե այն թերի է, ետ է վերադարձվում՝ թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդ տեղադրելու թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը և կցվում է գովազդի էսքիզը: Թույլտվության որոշման նախագծերը նախապատրաստում է Քաղսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժինը՝ նախագծին կցելով համապատասխան եզրակացությունը:

11. Սույն կարգի 4-րդ կետի համապատասխան՝ հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Քաղսի համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

12. Գովազդի միջոց տեղադրելու վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի) դիմում-հայտը 15 օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և պայմանների պահանջներին.

2) իրախտվում են «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուղարձը, խախտվում են այլ անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

13. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու դեպքում՝ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

14. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Քաղսի համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Քաղսի համայնքի ղեկավարի հետ:

15. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կարգի, պայմանների և այլ իրավական ակտերի պահանջներին:

16. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Քաղսի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծով: Գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

17. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

18. Գովազդ տեղադրելու թույլտվության ժամկետը լրանալու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու, լուծելու դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

19. Սույն կարգով նախատեսված պարտավորությունները գովազդատուի (գովազդակիրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Քաղսի համայնքի ղեկավարի որոշման համաձայն՝ գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակիրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Քաղսի համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ավագանու որոշած դրույքաչափի համապատասխան:

21. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի

այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Քաղսի համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

22. Սույն կարգով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Քաղսի համայնքի ավագանու կողմից:

